



ՀՀ տարածքային
կառավարման և
ենթակառուցվածքների
նախարարություն



Implemented by
giz Deutsche Gesellschaft
für Internationale
Zusammenarbeit (GIZ) GmbH



ՀՀ պատական
կառավարման
ակադեմիա



**ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐԻ
ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ԿԱՐԻՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ
ԵՎ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԶԱՐԳԱՑՈՒՄ**

ՄՈԴՈՒԼ 4.

**Համայնքի ֆինանսական
կառավարում**

Երևան, 2026

Ուսումնական մոդուլը մշակվել է Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիայի կողմից՝ ԳՄՀԸ/GIZ համագործակցության շրջանակում **«Ավագանու անդամների վերապատրաստման կարիքների գնահատում և կարողությունների զարգացում»** ծրագրով:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄՈԴՈՒԼԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ.....	4
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ.....	7
ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՌԱՐԱՆ	8
ՄԱՍ 1. ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ (ՏԵՍԱԿԱՆ ՄԱՍ).....	9
ՄԱՍ 2. ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ (ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ)	34
ԹԵՍՏԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ	40
ՆՅՈՒԹԵՐ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ	42
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	43

ՄՈԴՈՒԼԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Մոդուլի նպատակը	Համայնքների ավագանիների անդամների կարողությունների զարգացում
Մոդուլի խնդիրները	Տեսական և գործնական ուսուցման միջոցով զարգացնել ունկնդիրների գիտելիքները «Տեղական ինքնակառավարման մասին» և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքներով համայնքի ավագանուն վերապահված իրավասությունների վերաբերյալ, բարձրացնել համայնքի ֆինանսական կառավարման ոլորտում ավագանու անդամի իրավունքների և պարտականությունների իմացության մակարդակը, ընդլայնել համայնքի բյուջետային գործընթացներում ավագանու լիազորությունների մասին իրազեկվածության շրջանակը, նպաստել համայնքի բյուջետային գործընթացներում համայնքի ավագանու վերահսկողական բնույթի լիազորությունների իրականացմանը ակտիվ ներգրավվածություն ունենալու և համայնքի բյուջեի, ՄԺԾԾ-ի մշակման և ընդունման ժամանակ ակտիվ ներգրավվածություն ունենալու կարողությունների կատարելագործմանը:
Մոդուլի տևողությունը	1-4 ժամ
Մուտքային պահանջները	Մոդուլն ուսումնասիրելուց առաջ ունկնդիրը պետք է առնվազն ընդհանրական գիտելիքներ ունենա ՀՀ բյուջետային համակարգի և տեղական ինքնակառավարման բնագավառի ֆինանսատնտեսական հիմունքների, համայնքի զարգացման ծրագրերի և բյուջեի հիմնական տարրերի վերաբերյալ:
Ուսումնասիրվող թեմաները	Թեմա 1. Համայնքի բյուջետային գործընթացի կազմակերպումը և համայնքի բյուջեի կառավարումը Թեմա 2. Համայնքի բյուջեի ձևավորման աղբյուրները, համայնքի բյուջեին ներկայացվող պահանջները և բյուջեի նախագծի կառուցվածքը Թեմա 3. Համայնքի բյուջեի նախագծի մշակման, քննարկման և հաստատման կարգը Թեմա 4. Համայնքի միջնաժամկետ ծախսերի ծրագիրը Թեմա 5. Համայնքի բյուջետային գործընթացներում համայնքի ավագանու վերահսկողական բնույթի լիազորությունները
Մոդուլի գնահատման կարգը և միջոցները	Գնահատումն իրականացվելու է թեստային առաջադրանքի միջոցով: Թեստային առաջադրանքը կազմված է մոդուլի

	թեմաներին անդրադարձող 10 հարցից: Թեստային առաջադրանքի յուրաքանչյուր հարցի համար սահմանված է միավոր՝ ելնելով դժվարության մակարդակից և թեմային համապատասխանությունից: Թեստային առաջադրանքը համարվում է հաջողությամբ ավարտված, եթե ճիշտ պատասխանները կազմում են առաջադրանքի բոլոր հարցերի առնվազն 70%-ը:
Վերապատրաստման դասընթացից ակնկալվող արդյունքները (գիտելիքներ, հմտություններ, կարողություններ) Այս մոդուլը հաջողությամբ ավարտելուց հետո ունենդիրը պետք է՝	
Արդյունք 1.	իմանա ՀՀ տեղական ինքնակառավարման համակարգի ֆինանսատնտեսական հիմունքները, կարողանա ներկայացնել համայնքի ավագանու՝ «Տեղական ինքնակառավարման մասին» և «Հայաստանի Հանրապետության բյուջեի մասին» ՀՀ օրենքներով սահմանված հիմնական լիազորությունները
Արդյունք 2.	կարողանա ակտիվ մասնակցություն ունենալ համայնքի բյուջեի գործընթացի կազմակերպմանը և համայնքի բյուջեի կառավարմանը
Արդյունք 3.	կարողանա սահմանել ՄԺԾԾ հասկացությունը, անվանել ՄԺԾԾ-ի նպատակները
Արդյունք 4.	նպաստի համայնքի բյուջեի գործընթացներում համայնքի ավագանու վերահսկողական բնույթի լիազորությունների իրականացմանը
Արդյունք 5.	կարողանա թվարկի համայնքի բյուջեի ձևավորման աղբյուրները, բյուջեին ներկայացվող պահանջները և բյուջեի նախագծի կառուցվածքը
Արդյունք 6.	իմանա ավագանու դերը և լիազորությունների շրջանակը բյուջեի գործընթացի կազմակերպման և համայնքի բյուջեի կառավարման հարաբերություններում
Արդյունք 7.	կարողանա ակտիվորեն մասնակցել ՄԺԾԾ-ի և համայնքի բյուջեի նախագծերի մշակման, քննարկման և հաստատման գործընթացներին
Մոդուլի ուսուցման մեթոդաբանությունը	Մոդուլի ուսուցման ընթացքում, ի լրումն ներկայացված տեսական նյութի մատուցման, անհրաժեշտ է կիրառել ինտերակտիվ ուսուցման առնվազն հետևյալ եղանակները. • աշխատանք խմբերով

	• անհատական առաջադրանքների կատարում • դեպքերի/իրավիճակների քննարկում • ինքնակրթություն՝ լրացուցիչ նյութերի ընթերցում և դիտում
Մոդուլի համար ռեսուրսները	• մոդուլին և թեմայի առանձնահատկություններին տիրապետող փորձագետ • ուսումնական տարածք՝ կահավորված անհրաժեշտ սարքավորումներով ու նյութերով

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ԱԺ	Ազգային ժողով
ՏԻՄ	Տեղական ինքնակառավարման մարմիններ
ՀՀԶԾ	Համայնքի հնգամյա զարգացման ծրագիր
ՏԱՊ	Տարեկան աշխատանքային պլան
ՄԺԾԾ	Միջնաժամկետ ծախսերի ծրագիր

Համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը

Համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական, տնտեսական, բնական և մարդկային ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջությունն արտահայտող փաստաթուղթ է, որը նախատեսում է ռազմավարական կտրվածքով համայնքի հիմնախնդիրների արդյունավետ լուծումը

Համայնքի միջնաժամկետ ծախսերի ծրագիրը

Համայնքի ծախսային ռազմավարությունն է երեք տարվա համար

Համայնքի բյուջեն

Համայնքի միջնաժամկետ ծախսերի ծրագրով նախատեսված եկամուտների (մուտքերի) ձևավորման և ծախսման մեկ տարվա ֆինանսական ծրագիրն է, որը նպատակաուղղվում է համայնքի հնգամյա զարգացման ծրագրի և տեղական ինքնակառավարման մարմինների՝ օրենքով վերապահված լիազորությունների իրականացմանը

Բյուջետային գործընթացը

Յուրաքանչյուր բյուջետային տարվա բյուջեները կազմելու, քննարկելու, հաստատելու և կատարելու, դրանց տարեկան հաշվետվությունները հաստատելու ուղղությամբ պետական կառավարման և ՏԻՄ-երի օրենքով կանոնակարգված գործունեությունն է

**ՄԱՍ 1. ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ
(ՏԵՍԱԿԱՆ ՄԱՍ)**

Թեմա 1. Համայնքի բյուջետային գործընթացի կազմակերպումը և համայնքի բյուջեի կառավարումը

Բյուջետային գործընթացի սահմանումը

Բյուջետային գործընթացը՝ յուրաքանչյուր բյուջետային տարվա բյուջեները կազմելու, քննարկելու, հաստատելու և կատարելու, դրանց տարեկան հաշվետվությունները հաստատելու ուղղությամբ պետական կառավարման և ՏԻՄ-երի օրենքով կանոնակարգված գործունեությունն է:

Բյուջեների նախագծերը կազմվում են կառավարության գործունեության, ինչպես նաև համայնքների զարգացման ծրագրերին համապատասխան:

ՀՀ-ում բյուջետային տարին սկսվում է յուրաքանչյուր տարվա հունվարի 1-ից և ավարտվում է նույն տարվա դեկտեմբերի 31-ին:

Բյուջետային տարվան հաջորդող տարվա առաջին ամսվա ընթացքում կառավարության որոշմամբ կարող է շարունակվել նախորդ բյուջետային տարվա պարտավորությունների գծով գործառնությունների ձևակերպումը (եզրափակիչ շրջանառություն), եթե տվյալ տարվա պետական բյուջեի մասին օրենքով այլ բան չի նախատեսվել:

Տվյալ բյուջետային տարվա համար բյուջետային գործընթացն սկսվում է ՀՀ վարչապետի կողմից առաջիկա տարվա բյուջետային գործընթացն սկսելու մասին որոշման ընդունման օրը և ավարտվում՝ տվյալ բյուջետային տարվա բյուջեների կատարման վերաբերյալ հաշվետվությունը հաստատելու օրը:

Բյուջետային գործընթացը ենթադրում է՝

- Բյուջետային գործընթացում շահագրգիռ բոլոր կողմերի (դերակատարների) ակտիվ ներգրավում,
- Բյուջեների մշակում, հաստատում և կատարում ՀՀ օրենքով ու նորմատիվ ակտերով սահմանված կարգով ու ժամկետներում,
- Համայնքի բյուջեի կազմում բյուջետային համակարգի միասնականությունն ապահովող բյուջետային գործընթացի կազմակերպման համաձայնեցված սկզբունքների, բյուջեների դասակարգման, հաշվառման և հաշվետվության միասնական մեթոդաբանության հիման վրա,
- Ֆինանսական միջոցների պլանավորում ՀՀԶԾ-ի հիման վրա,
- Բյուջետային գործընթացի հիմնական փուլերի պարտադիր պահպանում,
- Բյուջետային գործընթացի թափանցիկության և հրապարակայնության ապահովում:


Բյուջետային գործընթացի կազմակերպումը

Բյուջեի մշակման գործընթացը պետք է լինի ծրագրավորված և կանոնակարգված, ինչը պահանջում է՝

- Գործընթացի կազմակերպման նախապատրաստում.
 - համայնքի ղեկավարի որոշումը (կարգադրությունը) բյուջետային գործընթացը սկսելու մասին,
 - բյուջետային օրացույցի կազմում,
 - բյուջետային քաղաքականության հիմնական ուղղությունների որոշում,
 - մեթոդական ցուցումների մշակում,
 - բյուջետային ձևերի մշակում,
- Ակնկալվող եկամուտների աղբյուրների և ծավալների որոշում.
- Նախատեսվող ծախսերի հիմնական ուղղությունների ձևավորում.
- Բյուջեի քննարկումը որպես ֆինանսական հնարավորությունների և հայտերի համատեղելիության ստուգում.
- Բյուջեի վերջնական նախագծի կազմում.
- Բյուջեի հրապարակայնության ապահովում և հաստատում.
- Բյուջեի կատարում.

Բյուջեի կատարման վերահսկում և գնահատում:

Բյուջետային գործընթացի կազմակերպումը



Անհրաժեշտ է իմանալ, որ ...

Համայնքի բյուջեի նախագիծը կազմելու նպատակով համայնքի ղեկավարը մշակում է նախագծի կազմման օրացույց (բյուջետային օրացույց):

Բյուջետային գործընթացի հիմնական փուլերը

1. Բյուջեի նախագծի կազմում և հաստատում.
2. Բյուջեի կատարում և վերահսկում.
3. Բյուջեի կատարման տարեկան հաշվետվության կազմում և հաստատում:

Բյուջետային գործընթացի ընդհանուր տևողությունը համայնքներում, որպես կանոն, չի գերազանցում 22 ամիսը:

Բյուջետային գործընթացի առաջին փուլն սկսվում է կանխատեսվող տարվան նախորդող տարվա կեսին և տևում է շուրջ 6-7 ամիս:

Երկրորդ փուլի տևողությունը կազմում է 12 ամիս՝ ընդ որում, այդ փուլը սկսվելու և ավարտվելու ժամկետները ամբողջապես համընկնում են կանխատեսվող բյուջետային տարվա համապատասխան ժամկետների հետ (հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ը):

Հաջորդ փուլն սկսվում է բյուջետային տարվա ավարտին հաջորդող օրվանից: Ըստ օրենքի, բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը համայնքի ղեկավարը ավագանուն ներկայացնում է ոչ ուշ, քան մինչև հաշվետու բյուջետային տարվան հաջորդող տարվա մարտի 1-ը, իսկ ավագանին, աուդիտորական մասնագիտացված կազմակերպության եզրակացության առկայությամբ, այն քննարկում և հաստատում է մինչև հաշվետու բյուջետային տարվան հաջորդող տարվա մարտի 20-ը:

Բյուջեի կառավարման գործառույթները՝

- Պլանավորում
- Կազմակերպում
- Իրագործում (կատարում)
- Վերահսկում

Համայնքի ղեկավարը օրենքով սահմանված կարգով ապահովում է համայնքի բյուջետային գործընթացի կառավարումը և հանդիսանում է համայնքի բյուջեի կատարման պատասխանատուն:

Համայնքի բյուջեի կատարումը

Համայնքի բյուջեի կատարումը պետական և տեղական ինքնակառավարման լիազորություններն իրականացնող մարմինների՝ համայնքի բյուջեի մուտքերի ձևավորման և ծախսերի իրականացման համակարգված գործունեությունն է:

Համայնքի բյուջեի մասին ավագանու որոշումն ուժի մեջ մտնելուց հետո՝ **երկշաբաթյա ժամկետում**, համայնքի ղեկավարը սահմանում է համայնքի բյուջեի կատարման եռամսյակային համամասնությունները, բյուջետային օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում հաստատում է բյուջետային հիմնարկների պահպանման ծախսերի նախահաշիվները:

Համայնքի ղեկավարը, համայնքի բյուջեի կատարումն ապահովելու նպատակով՝

ա) համայնքի ավագանու հաստատած տարեկան բյուջեն, եռամսյակային համամասնություններով և բյուջետային հիմնարկների պահպանման ծախսերի տարեկան և եռամսյակային բաշխմամբ հաստատված նախահաշիվները տրամադրում է համայնքի բյուջեի կատարման սպասարկումն իրականացնող պետական լիազորված մարմինն,

բ) ստորագրում է ֆինանսական փաստաթղթերը,

գ) աջակցում է հարկային մարմիններին՝ համայնքի բյուջե հարկերի մուտքագրման գործում,

դ) իրականացնում է օրենքով սահմանված այլ լիազորություններ:

Համայնքի բյուջեի կատարման ընթացքում համայնքի ղեկավարը կարող է կատարել բյուջեն հաստատելու մասին՝ համայնքի ավագանու ընդունած որոշմանը չհակասող վերաբաշխումներ: Համայնքի ղեկավարի կատարած փոփոխությունների հանրագումարը բյուջետային տարվա ընթացքում չի կարող գերազանցել տվյալ տարվա բյուջեի մասին որոշմամբ սահմանված չափաքանակները:

Համայնքի բյուջեում փոփոխություններ և (կամ) լրացումներ կարող են կատարվել **համայնքի ղեկավարի կամ համայնքի ավագանու անդամի (անդամների) առաջարկությամբ**: Այդ փոփոխությունները և (կամ) լրացումները չեն կարող խախտել համայնքի բյուջեի՝ օրենքով սահմանված հավասարակշռությունը: Համայնքի ավագանու անդամների առաջարկած այն փոփոխությունները և (կամ) լրացումները, որոնք նվազեցնում են համայնքի բյուջեի մուտքերը կամ ավելացնում են ելքերը, համայնքի ավագանին քննարկում է միայն համայնքի ղեկավարի եզրակացության առկայությամբ և ընդունում ավագանու անդամների ընդհանուր թվի ձայների **երկու երրորդով**:

Համայնքի բյուջեում փոփոխություններ և (կամ) լրացումներ կատարելու ընթացակարգը սահմանվում է համայնքի ավագանու կանոնակարգով՝ օրենքի համաձայն:

Հաստատված համայնքի բյուջեի եկամուտների կազմում չնախատեսված և այդ բյուջե մուտքագրված նվիրաբերված գումարները համայնքի ղեկավարն իրավասու է նույն տարում ծախսել՝ ըստ նվիրաբերողի կողմից որոշված ուղղությունների:

ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ

սպասարկումն օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով իրականացվում է պետական ֆինանսների կառավարման բնագավառում

ՀՀ կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի՝

ԳԱՆՁԱՊԵՏԱՐԱՆԻ ՄԻՋՈՑՈՎ,

որտեղ ամեն համայնք ունի իր առանձին
բյուջետային հաշվի համարը:

Համայնքի բյուջեի կատարման վերահսկողության հիմնական ձևերն են՝

- նախնական վերահսկողություն՝ բյուջեի նախագծի կազմման, քննարկման և հաստատման ընթացքում,
- ընթացիկ վերահսկողություն՝ բյուջեի կատարման նկատմամբ, բյուջեի կատարման գնահատում,
- վերջնական վերահսկողություն՝ բյուջեի կատարման տարեկան հաշվետվության կազմման և գնահատման, ավագանու կողմից քննարկման և հաստատման ընթացքում:

Բյուջեի կատարման վերահսկման գործընթացը ներառում է՝

- ա) ֆինանսական և հաշվապահական վերահսկողությունը,
- բ) կառավարման գործառույթների պարբերական վերլուծությունը և վերահսկողությունը,
- գ) ծրագրերի կամ կատարված աշխատանքների վերահսկողությունը և գնահատումը:

Համայնքի ղեկավարը եռամսյակը մեկ՝ մինչև հաշվետու **եռամսյակին հաջորդող ամսվա տասնհինգը,**
բյուջեի կատարման ընթացքի մասին հաղորդում է ներկայացնում ավագանուն:

Անհրաժեշտ է իմանալ, որ ...

Բյուջետային գործընթացի նկատմամբ պետական լիազորված մարմինն իրականացնում է **իրավական հսկողություն:**

Հարկավոր է իմանալ, որ ...

Համայնքի բյուջեի կատարման հետ կապված կարգավորումները սահմանվում են «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքով:

Թեմա 2. Համայնքի բյուջեի ձևավորման աղբյուրները, համայնքի բյուջեին ներկայացվող պահանջները և բյուջեի նախագծի կառուցվածքը

ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

- հարկային եկամուտներ.
- տուրքեր.
- այլ եկամուտներ.
- ոչ ֆինանսական ակտիվների օտարումից ստացվող միջոցներ.
- պաշտոնական դրամաշնորհների ձևով ստացվող հատկացումներ.
- համայնքի բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրներ:

Կարևոր է հիշել, որ ...

**ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵՆ ԲԱՂԿԱՑԱԾ Է
ՎԱՐՉԱԿԱՆ ԵՎ ՖՈՆԴԱՅԻՆ ՄԱՍԵՐԻՑ**

**Համայնքի բյուջեն ունի
ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴ,**

որը կարող է օգտագործվել տվյալ տարվա բյուջեով չկանխատեսված ծախսերի կամ նախատեսված ծախսերի լրացուցիչ ֆինանսավորման համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ

- Բյուջետային տարվա համար համայնքի բյուջեի յուրաքանչյուր (վարչական և ֆոնդային) մասով նախատեսված հաշվարկային-դրամարկղային ելքերը չեն կարող գերազանցել տվյալ տարվա բյուջեի համապատասխան մասերով նախատեսված հաշվարկային-դրամարկղային մուտքերը:
- Բյուջեի ծախսերի նկատմամբ եկամուտների գերազանցումը կազմում է բյուջեի հավելուրդը, իսկ բյուջեի եկամուտների

նկատմամբ ծախսերի գերազանցումը՝ բյուջեի դեֆիցիտը (այսուհետ՝ պակասուրդ):

- Համայնքի բյուջեի պակասուրդի գումարը չպետք է գերազանցի պակասուրդի ֆինանսավորման համար օրենքով սահմանված աղբյուրների ընդհանուր գումարը:
- Համայնքի բյուջեի պակասուրդի կամ հավելուրդի չափը սահմանվում է համայնքի ավագանու՝ տվյալ տարվա համայնքի բյուջեի մասին որոշմամբ:
- Բյուջետային գործընթացի նկատմամբ պետական լիազորված մարմինն իրականացնում է իրավական հսկողություն:
- Համայնքի բյուջեի պակասուրդի (դեֆիցիտի) ֆինանսավորման նպատակով նախորդ տարիներին ներգրաված չմարված վարկերի, փոխատվությունների, համայնքային արժեթղթերի մարման պարտավորությունների առկայության դեպքում համայնքի ղեկավարը պետական լիազորված մարմնի հետ համատեղ, վերջինիս սահմանած կարգով, մշակում է բյուջեի պակասուրդը ծածկող նշված պարտավորություններն աստիճանաբար մարելու ծրագիր: Ծրագրի իրականացման ժամանակահատվածում դա համայնքի բյուջեն կազմելու հիմք է: Այդ դեպքում պետական լիազորված մարմինը, բացի իրավական հսկողությունից, հսկողություն է իրականացնում ծրագրի կատարման ընթացքի նկատմամբ չմարված վարկերի, փոխատվությունների, համայնքային արժեթղթերի մարման պարտավորությունները մարելու ծրագրի իրականացման առնչությամբ:

Համայնքի բյուջեի նախագծի կառուցվածքը

Համայնքի բյուջեի նախագիծն իր մեջ ընդգրկում է՝

1. Համայնքի ղեկավարի բյուջետային ուղերձը, որը ներառում է.

- համայնքի ղեկավարի զեկույցը բյուջետային տարվա համայնքի զարգացման հիմնական ուղղությունների, ինչպես նաև համայնքի բյուջեի հիմքում դրված՝ համայնքի ՄԺԾԾ-ի մասին.
- համայնքի բյուջեի նախագծով նախատեսված եկամուտների և ծախսերի հիմնավորումը, եկամուտների և ծախսերի, ինչպես նաև դեֆիցիտի (պակասուրդի)

կամ հավելուրդի հիմնավորումը, ինչպես նաև այդ ցուցանիշների համեմատական վերլուծությունը նախորդ տարվա բյուջեի փաստացի, ընթացիկ բյուջետային տարվա հաստատված և հաշվարկային ցուցանիշների հետ,

- համայնքի բյուջեից ֆինանսավորվող նպատակային ծրագրերի կատարման համար պահանջվող գումարների և առաջարկվող հատկացումների հիմնավորումը, որը ներառում է ծրագրի՝
 - իրավական հիմքը.
 - բովանդակությունը.
 - խնդիրները և նպատակները.
 - կատարման փուլերը և ժամկետները.
- պարտքերի կառուցվածքը, դրանց համեմատական վերլուծությունը նախորդ բյուջետային տարվա փաստացի և ընթացիկ բյուջետային տարվա հաշվարկային համապատասխան ցուցանիշների հետ.
- բյուջեի վարչական և ֆոնդային մասերի պահուստային ֆոնդի ձևավորման համար առաջարկվող հատկացումների հիմնավորումը.
- օրենքին համապատասխան ստացված տեղեկությունները պետական բյուջեի նախագծում (եթե համայնքի բյուջեի մասին ավագանու որոշման նախագիծն ավագանու քննարկմանը ներկայացվում է մինչև առաջիկա տարվա պետական բյուջեի մասին օրենքի ընդունումը) կամ պետական բյուջեի մասին օրենքում պետական բյուջեից համայնքի բյուջեին նախատեսված հատկացումների մասին.
- տեղեկություններ՝ համայնքի բյուջեի միջոցների հաշվին պահպանվող բյուջետային հիմնարկների հաստիքների միջին տարեկան ցուցակային ընդհանուր թվաքանակի, աշխատավարձի ֆոնդի մասին և այդ ցուցանիշների համեմատական վերլուծությունը նախորդ բյուջետային տարվա և ընթացիկ բյուջետային տարվա հաշվարկային համապատասխան ցուցանիշների հետ, ինչպես նաև տեղեկություններ փաստացի աշխատողների (զբաղեցրած հաստիքների) միջին տարեկան ցուցակային թվաքանակի մասին.
- այլ տեղեկություններ, որոնք համայնքի ղեկավարն անհրաժեշտ է համարում համայնքի բյուջեի մասին ավագանու որոշման նախագծի հիմնավորման համար:

2. Համայնքի բյուջեի մասին ավագանու որոշման նախագիծը, որը ներառում է՝

- համայնքի բյուջեի եկամուտները և ծախսերը՝ ըստ բյուջեի բաղկացուցիչ մասերի՝ օրենքով սահմանված դասակարգմամբ (բացառությամբ բյուջետային ծախսերի տարածքային դասակարգման),
- համայնքի բյուջեի դեֆիցիտը (պակասուրդը) կամ հավելուրդը և դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման աղբյուրները կամ հավելուրդի օգտագործման ուղղությունները՝ օրենքով սահմանված դասակարգմամբ,
- այլ դրույթներ և ցուցանիշներ, որոնք համայնքի ղեկավարը և ավագանին անհրաժեշտ են համարում համայնքի բյուջեի կատարումը և դրա նկատմամբ վերահսկողությունն ապահովելու համար:

Անհրաժեշտ է իմանալ, որ ...

Համայնքներին չի կարող պարտադրվել ֆինանսական համահարթեցման սկզբունքով հատկացված ֆինանսական միջոցների ուղղում կոնկրետ ծախսերի իրականացմանը:

Համայնքների ներդաշնակ զարգացումն ապահովելու նպատակով պետական բյուջեի ծախսերում նախատեսվում են համայնքների բյուջեներին ֆինանսական համահարթեցման սկզբունքով՝ համայնքների ընթացիկ ծախսերի ծածկման համար անհատույց և անվերադարձ կարգով տրվող դրամական միջոցներ՝ ֆինանսական համահարթեցման դոտացիաներ:

Պետական բյուջեից համայնքներին ֆինանսական համահարթեցման սկզբունքով տվյալ տարում տրամադրվող դոտացիաների ընդհանուր գումարը (ներառյալ՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 93-րդ հոդվածի համաձայն պետության կողմից համայնքներին տվյալ տարում տրվող փոխհատուցման գումարները) սահմանվում է ոչ պակաս, քան տվյալ տարվան նախորդող երկրորդ բյուջետային տարում Հայաստանի Հանրապետության համախմբված բյուջեի փաստացի եկամուտների հանրագումարի 4 տոկոսը:

Համայնքների բյուջեներին ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաների հաշվարկման և հատկացման կարգը սահմանվում է օրենքով:

Պետական բյուջեի ծախսերում կարող են նաև նախատեսվել համայնքների բյուջեներին հատկացվող՝

ա) այլ դոտացիաներ՝ համայնքի բյուջեի ընթացիկ ծախսերի ֆինանսավորմանն աջակցելու նպատակով որևէ ծախսատեսակի (ծրագրի) իրականացման հետ չկապակցված, անհատույց և անվերադարձ կարգով տրվող դրամական միջոցներ:

բ) սուբվենցիաներ՝ համայնքի կողմից իրականացվող առանձին նպատակային ծախսատեսակի (ծրագրի) կատարման համար անհատույց և անվերադարձ կարգով տրվող դրամական միջոցներ: ՀՀ կառավարությունն իրավասու է հետ պահանջել համայնքից պետական բյուջեից համայնքին հատկացված սուբվենցիաների ոչ նպատակային ծախսված գումարները:

Սուբվենցիաների տրամադրումն իրականացվում է ՀՀ կառավարության կողմից սահմանված կարգով:

Թեմա 3. Համայնքի բյուջեի նախագծի մշակման, քննարկման և հաստատման կարգը

Լավ բյուջեն այն բյուջեն է, որը բավարար տեղեկություններ է ապահովում այնպիսի տեսքով, որ օգնի քաղաքական կուրսը մշակողներին և որոշում կայացնողներին՝ սակավ ռեսուրսները արդյունավետ բաշխել ծախսերի վրա, ըստ վերջիններիս առաջնայնության:

Բ. Ուոլդրիջ

Հարկավոր է հիշել, որ ...

ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵՆ

համայնքի միջնաժամկետ ծախսերի ծրագրով նախատեսված եկամուտների (մուտքերի)

ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԾԱԽՍՄԱՆ

ՄԵԿ ՏԱՐՎԱ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ

ԾՐԱԳԻՐՆ Է,

որը նպատակաուղղվում է համայնքի հնգամյա զարգացման ծրագրի և տեղական ինքնակառավարման մարմինների՝ օրենքով վերապահված լիազորությունների իրականացմանը:

Անհրաժեշտ է հիշել, որ ...

Տեղական ինքնակառավարման սկզբունքներից է՝

համայնքների բյուջեների ինքնուրույնությունը՝ ՏԻՄ-երի օրենքով սահմանված աղբյուրներից համայնքային բյուջե ձևավորելու և սեփական պատասխանատվությամբ այն տնօրինելու հնարավորությունը:

Համայնքի բյուջեի նախագծի կազմումը

Համայնքի բյուջեի կազմման, քննարկման և հաստատման կարգը սահմանվում է ՀՀ բյուջետային օրենսդրությամբ:

Համայնքի բյուջեի նախագիծը կազմվում է՝ հիմք ընդունելով համայնքի ՄԺԾԾ-ն՝ տվյալ բյուջետային տարվա հիմնախնդիրների լուծման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների պլանավորման հիման վրա:

Համայնքի բյուջեի նախագծի մշակման գործընթացը բաղկացած է երկու փուլից՝

1) առաջիկա տարվա համայնքի բյուջեի նախագծի մշակման համար պատշաճ ծրագրային հիմքեր ստեղծելու նպատակով առաջիկա երեք տարվա՝ ՄԺԾԾ-ի մշակում:

2) առաջիկա տարվա համայնքի բյուջեի նախագծի մշակում:

Առաջիկա երեք տարվա՝ համայնքի ՄԺԾԾ-ի մշակման նպատակն է հնարավորություն ստեղծել համայնքի համար միջնաժամկետ հատվածում կառավարելու համայնքի ֆինանսական ռեսուրսները: ՄԺԾԾ-ն հիմք է ծառայում համայնքի բյուջեի նախագծի մշակման աշխատանքների համար:

Համայնքի բյուջեի նախագիծը կազմելու, ինչպես նաև այն ավագանուն և հանրությանը ներկայացնելու իրավասությունն օրենքով վերապահված է համայնքի ղեկավարին:

Համայնքի բյուջեի նախագիծը կազմվում է բյուջետային համակարգի միասնականությունն ապահովող բյուջետային գործընթացի կազմակերպման համաձայնեցված սկզբունքների, բյուջետային դասակարգման, հաշվառման և հաշվետվության միասնական մեթոդաբանության հիման վրա:

ՀՀ կառավարության կամ նրա կողմից լիազորված պետական կառավարման մարմնի կողմից բյուջետային ծախսերի հաշվարկման համար սահմանված նորմերը և նորմատիվները համայնքների բյուջեներով նախատեսվող ծախսերի հաշվարկման ժամանակ կրում են խորհրդատվական բնույթ, բացառությամբ ՏԻՄ-երին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի և պետական բյուջեից համայնքներին տրամադրվող այլ նպատակային ծախսերի ֆինանսավորման դեպքերի:

Բյուջետային գործընթացի առաջին փուլը՝ համայնքի բյուջեի նախագծի մշակման գործընթացը, իր հերթին, պայմանականորեն կարելի է բաժանել երկու մասի.

1. **բյուջեի նախագծի մշակման աշխատանքների նախապատրաստում և կազմակերպում,**

2. **բյուջեի նախագծի մշակում:**

Համայնքի բյուջեի նախագծի մշակման փուլում համայնքի ղեկավարը՝

1. ապահովում է համայնքապետարանի աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումների կողմից եկամուտների և ծախսերի հաշվարկումը, հայտերի կազմումը, դրանց ստուգումը, ամփոփումը և համայնքի բյուջեի նախագծի ձևավորման նախնական տարբերակի հավասարակշռումը.

2. կազմակերպում է համայնքի բյուջեի նախագծի նախնական տարբերակի քննարկումներ աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումների, համայնքային ենթակայության հիմնարկների և կազմակերպությունների ղեկավարների հետ՝ դրանց մասնակից դարձնելով նաև ավագանու անդամներին,

3. համայնքի բյուջեի նախագծի նախնական տարբերակի քննարկումների արդյունքներով ապահովում է համայնքի բյուջեի նախագծի վերջնական տարբերակի մշակումը և համայնքի բյուջեի մասին ավագանու որոշման նախագծի կազմումը:

Անհրաժեշտ է իմանալ, որ ...

**Համայնքի ղեկավարը բյուջեի նախագիծը
ավագանու քննարկմանն է ներկայացնում
ՀՀ կառավարության կողմից ֆինանսական համահարթեցման
սկզբունքով համայնքներին տրամադրվող դոտացիաների
նախնական թվերի հրապարակումից հետո՝
երկամսյա ժամկետում:**

Կարևոր է հիշել, որ ...

**Համայնքի ղեկավարը մինչև համայնքի տարեկան բյուջեի նախագիծը
համայնքի ավագանու հաստատմանը ներկայացնելը կազմակերպում
և անցկացնում է
ՀԱՆՐԱՅԻՆ ԲԱՑ ԼՍՈՒՄՆԵՐ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ:
Հանրային բաց լսումներում կամ քննարկումներում ստացված և
ընդունված առարկությունների և առաջարկությունների վերաբերյալ
համայնքի ղեկավարը
տեղեկություն է տրամադրում համայնքի ավագանուն:**

Կարևոր է իմանալ, որ ...

**Պետական լիազորված մարմինը և մարզպետների աշխատակազմերը
մեթոդական և խորհրդատվական օգնություն են ցույց տալիս համայնքի բյուջեի
նախագծի մշակման նախապատրաստման ընթացքում, ինչպես նաև օրենքով
սահմանված կարգով վերահսկում են բյուջետային գործընթացը:**

**Բյուջեի նախագիծն ավագանու անդամներին է ուղարկվում քննարկումից
առնվազն մեկ շաբաթ առաջ:**

**Համայնքի ավագանու նիստում համայնքի բյուջեի նախագծի քննարկման
կարգը սահմանվում է օրենքով և համայնքի ավագանու կանոնակարգով:**

**Համայնքի ղեկավարը համայնքի ավագանուն ներկայացնում է բյուջեի
նախագիծը, պատասխանում է ավագանու անդամների հարցերին:**

**Համայնքի ավագանու անդամները բյուջեի նախագծի վերաբերյալ կարող են
ներկայացնել գրավոր առաջարկություններ, որոնք քննարկվում են ավագանու
նիստում: Եթե ավագանու անդամի առաջարկությունը նախատեսում է նոր
ծախսեր, ապա նա պարտավոր է նշել համապատասխան ֆինանսական**

միջոցների աղբյուրները: Համայնքի ղեկավարը քննարկումներից հետո կարող է վերցնել մինչև մեկ շաբաթ ժամանակ՝ ներկայացված նախագծի մեջ համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարելու համար կամ պահանջել հաստատելու բյուջեն:

Նշված ժամկետում համայնքի ղեկավարը հրավիրում է համայնքի ավագանու նիստ և ներկայացնում է իր դիրքորոշումը բյուջեի՝ ավագանու առաջարկած փոփոխությունների վերաբերյալ: Բյուջեի նախագիծը համայնքի ղեկավարի ընդունած փոփոխություններով քվեարկության է դրվում ամբողջությամբ: Չընդունվելու դեպքում նոր բյուջեի նախագծի քննարկման ժամկետները կարող է որոշել համայնքի ավագանին՝ համաձայնեցնելով համայնքի ղեկավարի հետ, կամ համայնքի ղեկավարը՝ հրավիրելով արտահերթ նիստ:

Համայնքի բյուջեն հաստատում է համայնքի ավագանին, որի վերաբերյալ ընդունում է համայնքի ղեկավարի ներկայացրած համապատասխան որոշման նախագիծը:

Համայնքի բյուջեն չհաստատվելու դեպքում՝ համայնքի ղեկավարը կարող է դնել հրաժարական տալու միջոցով իր լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու հարցը: Եթե համայնքի ավագանին համայնքի ղեկավարի հրաժարականի վերաբերյալ դիմումը ստանալուց հետո եռօրյա ժամկետում իր անդամների ընդհանուր թվի ձայների երկու երրորդով նման որոշում չի ընդունում, ապա համայնքի բյուջեն համարվում է հաստատված՝ համայնքի ղեկավարի կատարած ուղղումներով:

Համայնքի բյուջեի հաստատման առնչությամբ՝ հրաժարական տալու միջոցով համայնքի ղեկավարի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու վերաբերյալ համայնքի ավագանու կողմից որոշում ընդունվելու դեպքում համապատասխան մարզպետը հարցը ներկայացնում է կառավարության լիազորած մարմին, որն էլ օրենքով սահմանված կարգով այն ներկայացնում է կառավարություն:

Եթե կառավարությունը դիմումը ստանալուց հետո մեկամսյա ժամկետում նման որոշում չի ընդունում, ապա համայնքի բյուջեն համարվում է հաստատված՝ համայնքի ղեկավարի կատարած ուղղումներով:

Կառավարության կողմից համայնքի ղեկավարի՝ հրաժարական տալու միջոցով լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու դեպքում՝ համայնքի նոր ղեկավարը բյուջեի նախագիծ է ներկայացնում համայնքի ավագանուն **քսան օրվա ընթացքում**: Այն քննարկվում և հաստատվում է օրենքով նախատեսված կարգով՝ **երեսուն օրվա ընթացքում**:

Համայնքի ղեկավարը, համայնքի բյուջեն ավագանու կողմից հաստատվելուց հետո 3 օրվա ընթացքում, ներկայացնում է համապատասխան մարզպետին:

Մարզպետը ստուգում է համայնքի ղեկավարի ներկայացրած բյուջեի համապատասխանությունն օրենքին՝ պահպանելով օրենքով սահմանված

բյուջեների ինքնուրույնության սկզբունքը, հաշվարկների համապատասխանությունը սահմանված մեթոդաբանությանը և բյուջետային համակարգի միասնականությունն ապահովող սկզբունքների պահպանման դեպքում համայնքի բյուջեն ներառում է պետական լիազորված մարմին ներկայացվող՝ մարզի վարչական տարածքում գտնվող համայնքների բյուջեների ամփոփ տեղեկանքում: Ամփոփ տեղեկանքի ձևը, նրա կազմման կարգը և ներկայացման ժամկետները սահմանում է պետական լիազորված մարմինը:

Մինչև բյուջետային տարվա սկիզբը համայնքի բյուջեն չհաստատվելու դեպքում՝ ծախսերը կատարվում են նախորդ տարվա բյուջեի համամասնություններով: Այդ դեպքում համայնքի ղեկավարը պարտավոր է կատարել նախկինում կնքված պայմանագրերից բխող պարտավորությունները, չիրականացնել նոր ներդրումներ, իսկ ծախսերը կատարել նախորդ տարվա յուրաքանչյուր ամսում կատարված ծախսերից ոչ ավելի:

Համայնքի տարեկան բյուջեն հրապարակվում է:

Համայնքի բյուջեն համայնքի բնակչության համար առավել մատչելի դարձնելու համար պատրաստվում և հրատարակվում են հիմնական ցուցանիշներ, վիճակագրական և գրաֆիկական տվյալներ պարունակող տեղեկատուներ ու գրքույկներ:

Համայնքի բյուջեն տարածվում է համայնքի կազմում ընդգրկված բոլոր բնակավայրերում և տեղադրվում է համայնքի պաշտոնական համացանցային կայքում:

ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՀՐԱՊԱՐԱԿԱՅՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ՝

- համայնքի բյուջեի մասին որոշման նախագիծը համայնքի ավագանուն ներկայացնելուց հետո եռօրյա ժամկետում հրապարակվում է տեղական մամուլում.
- բյուջետային տարվա յուրաքանչյուր եռամսյակից հետո մեկ ամսվա ընթացքում հրապարակվում է տեղեկատվություն համայնքի բյուջեի եռամսյակային կատարման մասին.
- համայնքի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը համայնքի ավագանու հաստատելուց հետո հնգօրյա ժամկետում հրապարակվում է տեղական մամուլում և www.Azdarar.am հասցեում գտնվող ՀՀ հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում.
- համայնքների ղեկավարները պայմաններ են ստեղծում, որ համայնքի բյուջեի

նախագծին, տարեկան հաշվետվությանը ծանոթանալու և այն
ուսումնասիրելու ցանկություն ունեցող համայնքի անդամները **կարողանան**
ծեռք բերեն համապատասխան փաստաթղթերը:

Թեմա 4. Համայնքի միջնաժամկետ ծախսերի ծրագիրը

Կարևոր է հիշել, որ ...

Համայնքի ՄԺԾԾ-ն՝ համայնքի ծախսային ռազմավարությունն է երեք տարվա համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ

սահմանում է եռամյա ժամանակահատվածում համայնքի ծախսային քաղաքականությունը տարեկան կտրվածքով՝
հնարավորություն ընձեռելով համայնքի համար միջնաժամկետ հատվածում կառավարելու համայնքի ֆինանսական ռեսուրսները և ստեղծելու պատշաճ ծրագրային հիմքեր առաջիկա տարվա համայնքի բյուջեի նախագծի մշակման համար:

ԱՌԱՋԻԿԱ ԵՐԵՔ ՏԱՐՎԱ՝ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾՐԱԳՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՆՊԱՏԱԿՆ Է՝

հնարավորություն ստեղծել համայնքի համար միջնաժամկետ հատվածում կառավարելու համայնքի ֆինանսական ռեսուրսները:

ՄԺԾԾ-ն հիմք է ծառայում համայնքի բյուջեի նախագծի մշակման աշխատանքների համար:

Համայնքի ՄԺԾԾ-ի կառուցվածքը և բովանդակությունը

Համայնքի ՄԺԾԾ-ն բաղկացած է երկու մասից՝

- 1) համայնքի եկամուտները շարադրող մաս:
- 2) համայնքի ծախսային քաղաքականությունը շարադրող մաս:

Եկամուտները շարադրող մասը պարունակում է տեղեկություններ՝

1) համայնքի ՄԺԾԾ-ի երեք տարվա (առաջիկա բյուջետային տարվա և դրան հաջորդող երկու տարիների) կտրվածքով եկամուտների կանխատեսումների և դրանց ռիսկերի վերաբերյալ.

2) եկամուտների ստացման (հավաքման) ուղղությամբ աշխատանքների ընթացքի գնահատականի և նախորդ ՄԺԾԾ-ով համայնքների եկամուտների ցուցանիշների փոփոխությունների վերաբերյալ՝ նախորդ ՄԺԾԾ-ում տեղ գտած եկամուտների ցուցանիշների նկատմամբ շեղումների կամ փոփոխությունների բացատրությամբ.

3) ՀՀԶԾ-ի և այլ տնտեսական ծրագրերի վերաբերյալ, որոնց հիման վրա պատրաստվել են կանխատեսումները՝ դրանց կարևորության հիմնավորմամբ:

Ծախսային քաղաքականությունը պարունակում է հետևյալ տեղեկությունները.

1) այն արդյունքները, որոնց համայնքը ցանկանում է հասնել համայնքի կողմից իրականացվելիք ծրագրերի շրջանակներում ծախսեր կատարելու միջոցով.

2) ծախսային գործոնները, այդ թվում՝ ակնկալվող տնտեսական և սոցիալական միտումները, որոնք կանխատեսվող ժամանակահատվածում կազդեն տվյալ համայնքում իրականացվելիք ծախսերի վրա.

3) համայնքի գերակայություններն ու առաջնահերթությունները կանխատեսվող ժամանակահատվածում, այդ թվում՝ առաջիկա տարվա համայնքների բյուջեների նախագծով նախատեսված.

4) տվյալ համայնքում արտաքին ֆինանսական աջակցության չափերը և աղբյուրները:

ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ

ԾՐԱԳԻՐԸ,

միջնաժամկետ ծախսերի ծրագրի՝ համայնքի ղեկավարի առաջարկած փոփոխությունները հաստատում է համայնքի ավագանին:

Համայնքի ղեկավարը որպես սեփական լիազորություն՝ կազմում և համայնքի ավագանու հաստատմանն է ներկայացնում ՄԺԾԾ-ն և դրանում առաջարկվող փոփոխությունները:

Կարևոր է հիշել, որ ...

Համայնքի ղեկավարը մինչև համայնքի ՄԺԾԾ-ի նախագիծը համայնքի ավագանու հաստատմանը ներկայացնելը կազմակերպում և անցկացնում է հանրային բաց լսումներ կամ քննարկումներ:

Հանրային բաց լսումներում կամ քննարկումներում ստացված և ընդունված առարկությունների և առաջարկությունների վերաբերյալ համայնքի ղեկավարը համայնքի ավագանուն տրամադրում է տեղեկատվություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՄԺԾԾ-Ի ՄՇԱԿՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

- ՄԺԾԾ-ի մշակումն իրականացվում է «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքով, մեթոդական ցուցումներով և համայնքի ավագանու որոշմամբ սահմանված ժամկետներում.
- առաջիկա տարվա բյուջետային գործընթացն սկսելու մասին **ՀՀ վարչապետի որոշմամբ** սահմանված ժամկետներում պետական լիազորված մարմինը իրավական հսկողության բարձրագույն մարմնի միջոցով ՏԻՄ-երին տրամադրում է վերջիններիս համար պարտադիր բնույթ կրող՝ համայնքի ՄԺԾԾ-ի նախագիծը կազմելու մեթոդական ցուցումները.
- ՄԺԾԾ-ի նախագիծը կազմելու մեթոդական ցուցումներում ներկայացվում են համայնքների կողմից մշակվող միջնաժամկետ ծրագրերի նախագծերին ներկայացվող ընդհանուր պահանջները և այդ նախագծերը ներկայացնելու կարգը.
- բյուջետային հիմնարկները կազմում և համայնքի ղեկավարին են ներկայացնում իրենց ՄԺԾԾ-երը՝ **համայնքի ավագանու որոշմամբ սահմանված ժամկետում**.
- համայնքի ղեկավարը համայնքի ՄԺԾԾ-ի նախագիծը ամփոփում, կազմում և կառավարության հաստատած պետական ՄԺԾԾ-ի հրապարակումից հետո՝ **մեկամսյա ժամկետում**, ներկայացնում է համայնքի ավագանու հաստատմանը.
- համայնքի ավագանու կողմից ՄԺԾԾ-ի հաստատումից հետո՝ **եռօրյա ժամկետում**, այն հրապարակվում է համայնքի պաշտոնական կայքէջում և ներկայացվում է համապատասխան մարզպետին:

Կարևոր է հիշել, որ ...

Համայնքի ղեկավարի կողմից մեկ ամսից ավելի իր ծառայողական պարտականությունների կատարման անհնարիության դեպքում մինչև դրա առաջացնող հանգամանքների վերացումը նրա լիազորությունների կատարումը դրվում է համայնքի ղեկավարի տեղակալի վրա, իսկ այդ պաշտոնը թափուր լինելու

պարագայում մարգպետը նշանակում է համայնքի ղեկավարի պաշտոնակատար:

Համայնքի ղեկավարի տեղակալի պաշտոնը թափուր լինելու պարագայում համայնքի ղեկավարի կողմից մինչև մեկ ամիս ժամկետով իր ծառայողական պարտականությունների կատարման անհնարինության դեպքում ավագանու նիստ հրավիրելու և վարելու պարտականությունները դրվում են համայնքի ավագանու՝ տարիքով ավագ անդամի վրա: Այդ ընթացքում **համայնքի ավագանու նիստի օրակարգում չեն կարող ընդգրկվել համայնքի զարգացման ծրագրի, համայնքի ՄԺԾԾ-ի, բյուջեի, ՏԱՊ-ի նախագծերը**, ինչպես նաև ավագանու նիստի ընթացքում չեն կարող ներկայացվել համայնքի ղեկավարի՝ օրենքով նախատեսված հաշվետվությունները:

Համայնքի ՄԺԾԾ-ն հրապարակվում է, համայնքի բնակչության համար առավել մատչելի դարձնելու համար պատրաստվում և հրատարակվում են հիմնական ցուցանիշներ, վիճակագրական ու գրաֆիկական տվյալներ պարունակող

տեղեկատուներ և գրքույկներ:

Համայնքի ՄԺԾԾ-ն տարածվում է համայնքի կազմում ընդգրկված բոլոր բնակավայրերում և տեղադրվում համայնքի պաշտոնական համացանցային կայքում:

Թեմա 5. Համայնքի բյուջետային գործընթացներում համայնքի ավագանու վերահսկողական բնույթի լիազորությունները

Համայնքի ավագանին՝

վերահսկում է համայնքի բյուջեի կատարումը և համայնքի ստացած վարկերի ու այլ ներգրավված ֆինանսական միջոցների օգտագործումը:

հաստատում է համայնքային մասհանումների ծախսման ծրագրերը, դրանցում առաջարկվող փոփոխությունները և վերահսկում դրանց իրականացումը:

վերահսկողություն է իրականացնում համայնքի ղեկավարի կողմից իր լիազորությունների իրականացման նկատմամբ:

ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆՆ
իրականացնում են համայնքի ավագանին,
Ազգային ժողովը և պետական վերահսկողական
ծառայությունը՝ օրենքով իրենց վերապահված լիազորությունների
շրջանակներում:

Համայնքի ավագանին համայնքի բյուջեի կատարման վերահսկողությունն իրականացնում է իր անդամի (անդամների) և (կամ) աուդիտորական մասնագիտացված կազմակերպության միջոցով, ավագանու որոշած պարբերականությամբ, բայց ոչ պակաս, քան տարին մեկ անգամ:

Համայնքի հնգամյա զարգացման ծրագրի կամ տարեկան բյուջեի կառավարման (կազմման, հանրային քննարկման, իրականացման (կատարման) և վերահսկման) գործընթացներում համայնքի բնակիչների մասնակցությունն ապահովելու համար համայնքի ղեկավարի առաջարկությամբ և

համայնքի ավագանու որոշմամբ ձևավորվում է

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝

աշխատակազմի և համայնքային կազմակերպությունների համապատասխան մասնագետների ընդգրկմամբ, ինչպես նաև

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՄԵԿԻՑ ՄԻՆՉԵՎ ԵՐԵՔ ԱՆԴԱՄՆԵՐԻ,
բնակիչների, փորձագետների և այլ շահագրգիռ անձանց
ներգրավմամբ:

Համայնքների բյուջեների կատարման վերահսկողության հիմնական խնդիրներն են՝

- բյուջետային մուտքերի կանխատեսումների և բյուջետային ելքերի նախահաշիվները կազմելու հիմնավորվածության ստուգումը,
- բյուջետային միջոցների, ներառյալ՝ վարկերի և ներգրավված այլ փոխառու միջոցների ծախսման օրինականության ստուգումը,
- բյուջետային պարտավորությունների կատարման, հաստիքանախահաշվային կարգապահության պահպանման, հաշվապահական հաշվառման և հաշվետվության վիճակի գնահատումը,
- բյուջետային հիմնարկների և կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության նկատմամբ **վերահսկողության** սահմանումը,
- բյուջետային գործընթացի նկատմամբ օրենքով սահմանված այլ պահանջների կատարման ապահովումը:

Համայնքի բյուջեի կատարման վերահսկողության հիմնական ձևերն են՝

- նախնական վերահսկողություն՝ բյուջեի նախագծի կազմման, քննարկման և հաստատման ընթացքում,
- ընթացիկ վերահսկողություն՝ բյուջեի կատարման նկատմամբ, բյուջեի կատարման գնահատում,
- վերջնական վերահսկողություն՝ բյուջեի կատարման տարեկան հաշվետվության կազմման և գնահատման, ավագանու կողմից քննարկման և հաստատման ընթացքում:

Բյուջեի կատարման վերահսկման գործընթացը ներառում է՝

- ա) ֆինանսական և հաշվապահական վերահսկողությունը,
- բ) կառավարման գործառույթների պարբերական վերլուծությունը և վերահսկողությունը,
- գ) ծրագրերի կամ կատարված աշխատանքների վերլուծությունը և գնահատումը:

Ֆինանսական և հաշվապահական վերահսկողությունը շեշտը հիմնականում դնում է միջոցների օգտագործման արդյունավետության վրա: Այն հիմք է հանդիսանում պարզելու բյուջեի կատարման համապատասխանությունը օրենսդրական և բյուջետավարման պահանջներին և իր մեջ ներառում է հաշվապահական գրանցումների և հաշվետվությունների իրականացումը՝ ելնելով այդ պահանջներից:

Կառավարման գործառույթների (գործունեության) պարբերական վերլուծության վերահսկողության կազմում առանձնանում է իրավաբանական և օրենսդրական վերահսկողությունը, որը վերաբերում է բյուջեի լրացումներին, չնախատեսված հատկացումներին, պարբերական հաշվետվություններին, բյուջեի հոդվածներով հատկացումների վրա դրվող պահանջներին, դրամական միջոցների օգտագործման ու չօգտագործված միջոցների ծախսման պայմաններին և աուդիտային պահանջներին: Կառավարման գործառույթների վերլուծությունն ու վերահսկողությունը ներառում է՝ հաստիքային վերահսկողությունը, գնված նյութական արժեքների և մատուցած ծառայությունների վերահսկողությունը, գործուղումների վերահսկողությունը, վճարացուցակների համակարգի վերահսկողությունը, անշարժ, շարժական և անձնական գույքի, ինչպես նաև նյութական արժեքների և սարքավորումների (կամ պահեստամասերի) գույքացուցակի վերահսկողությունը, բյուջեում կատարվող փոփոխությունների և բյուջետային փոխանցումների ձևաթղթերի վարչական ընթացակարգերի վերահսկողությունը, կառավարման հաշվետվությունների համակարգի վերահսկողությունը, ըստ խնդիրների կառավարման համակարգի վերահսկողությունը, աշխատանքների ծավալների և արդյունավետության չափման համակարգերի վերահսկողությունը և այլն:

Ծրագրերի վերլուծության և գնահատման խնդիրը բյուջետային ծրագրերի իրականացման գնահատումն է, որի նպատակն է «ծրագիր-բյուջե» և «ծախսեր-արդյունք» կապերի պարզաբանումը՝ բյուջեի միջոցները ծախսվել են արդյոք համաձայն ծրագրերի և այդ ծախսերի արդյունքում ի՞նչ է իրականում ստացվել: Պարբերաբար կատարվող ստուգումները ծրագրի պատասխանատուներին հնարավորություն են տալիս կատարելու կարգավորիչ գործողություններ առաջադրված նպատակներին սահմանված ժամկետներում հասնելու համար: Ժամանակին կատարվող վերստուգումների միջոցով գնահատվում են գործունեության էական թերացումների և շեղումների պատճառները և ձևակերպվում են կարգավորիչ գործողությունների համար անհրաժեշտ առաջարկությունները:

Բյուջեի կատարման նկատմամբ վերահսկողության բաղկացուցիչ մասն է **ֆինանսական աուդիտը, որը** սովորաբար իրականացվում է պետական իշխանության կառույցներից դուրս մասնագիտական մարմնի կողմից: Աուդիտը պարզում է բյուջետային հատկացումների վերաբերյալ որոշումների համապատասխանությունը օրենսդրության պահանջներին, բյուջեի ծախսերի հաստատման և կատարման ճշտությունը, բյուջեի ծախսերի ու պարտավորագրերով վճարումների համապատասխանությունը հատկացումներին: Աուդիտի առաջնային նպատակը բյուջեի կատարման իրավաբանական ճշտության ստուգումն է: Ընդ որում, այն

ապահովում է ֆինանսական գործառույթների քննումը նրանց իրականացումից և հաշվեհամարներում գրանցելուց հետո: Աուդիտորական մասնագիտացված կազմակերպությունը բյուջեի կատարման վերաբերյալ կազմում է եզրակացություն, որը համայնքի ղեկավարը ներկայացնում է ավագանու քննարկմանը՝ բյուջեի կատարման տարեկան հաշվետվության հետ միասին:

Անհրաժեշտ է իմանալ, որ ...

Համայնքի բյուջեի կատարման ընթացքի և բյուջետային գործընթացի նկատմամբ ընդհանուր վերահսկողությունն իրականացնող ավագանին իրեն վերապահված այդ լիազորությունը կարող է իրականացնել **ուղղակի և անուղղակի եղանակներով**: Առաջին դեպքում ավագանին իրավազոր է ստուգել ցանկացած բյուջետային գործողություն, աշխատանքների կատարման արդյունավետությունն ու որակը, պահանջել հաշվետվություններ՝ կատարված ծախսերի վերաբերյալ:

Հարկավոր է իմանալ, որ ...

Ավագանին իր կազմից կարող է ստեղծել ֆինանսաբյուջետային մշտական հանձնաժողով, որը կարող է ինչպես համագործակցել համայնքապետարանի աշխատակազմի հետ՝ բյուջեի նախագծի կազմման ընթացքում, այնպես էլ ավագանուն ներկայացնել վերլուծություններ բյուջեի կատարման ընթացքի վերաբերյալ:

Կարևոր է իմանալ, որ ...

ՏԻՄ-երի կողմից իրականացվող բյուջետային կամ ֆինանսատնտեսական գործունեության նկատմամբ իրականացվում է ֆինանսական հսկողություն՝ «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքով սահմանված դեպքերում և կարգով, իսկ ՏԻՄ-երում կամ համայնքային հիմնարկներում գնումների գործընթացը կանոնակարգող օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողությունը՝ «Պետական վերահսկողական ծառայության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

ՄԱՍ 2. ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ (ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ)

Վարժություն 1. Հարցերի պատասխանների համապատասխանության հաստատում (որոնում)

Յուրաքանչյուր առանձին որոշեք, թե 1-ին սյունակում բերված 6 հարցերի ենթադրյալ պատասխաններից ո՞ր պատասխանն է ճիշտ և Ձեր պատասխանը գրանցեք 2-րդ սյունակում: Երբ վերջացնեք առաջադրանքի կատարումը, խմբի մյուս անդամներին ծանոթացրեք Ձեր գրառումների հետ: Բոլոր տարբերությունները համատեղ քննարկեք և խմբով եկեք համաձայնության բոլոր հարցերի համար: Գրանցեք խմբի ընտրությունը յուրաքանչյուր հարցի համար 3-րդ սյունակում:

Հարցերը և ենթադրյալ պատասխանները	Հարցի ճիշտ պատասխանը (իմ ընտրությունը)	Հարցի ճիշտ պատասխանը (խմբի ընտրությունը)
Բյուջետային գործընթացի հիմնական փուլերն են՝ - բյուջեի կատարում և վերահսկում. - բյուջեի կատարման տարեկան հաշվետվության կազմում և հաստատում. - բյուջեի նախագծի հաստատում և վերահսկում. - բյուջեի նախագծի կազմում և հաստատում, բյուջեի կատարում և վերահսկում, բյուջեի կատարման տարեկան հաշվետվության կազմում և հաստատում:		
Բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը համայնքի ղեկավարը ավագանուն ներկայացնում է՝ - ոչ ուշ, քան մինչև հաշվետու բյուջետային տարվան հաջորդող տարվա մարտի 1-ը. 1) 2. ոչ ուշ, քան մինչև հաշվետու բյուջետային տարվան հաջորդող տարվա մարտի 20-ը. - ոչ ուշ, քան մինչև հաշվետու բյուջետային տարվան հաջորդող տարվա երկրորդ եռամսյակում - ոչ ուշ, քան մինչև հաշվետու բյուջետային տարվան հաջորդող տարվա հունվարի 15-ը.		

Ի՞նչ ժամկետում է համայնքի ղեկավարը համայնքի բյուջեն ավագանու կողմից հաստատվելուց հետո ներկայացնում համապատասխան մարզպետին. 1. 5 օրվա ընթացքում. 2. 3 օրվա ընթացքում. 3. 7 օրվա ընթացքում. 4. 15 օրվա ընթացքում:		
Համայնքի բյուջեի կատարման վերահսկողությունն իրականացնում են՝ 1. համայնքի ավագանին և ԱԺ-ն. 2. համայնքի ավագանին և պետական վերահսկողական ծառայությունը. 3. ԱԺ-ն և պետական վերահսկողական ծառայությունը. 4. համայնքի ավագանին, ԱԺ-ն և պետական վերահսկողական ծառայությունը.		
Համայնքի ՄԺԾԾ-ն բաղկացած է՝ 1. երեք մասից. 2. չորս մասից. 3. երկու մասից. 4. հինգ մասից:		
Համայնքի ավագանին համայնքի բյուջեի կատարման վերահսկողությունն իրականացնում է՝ 1. իր անդամի (անդամների) միջոցով. 2. իր անդամի (անդամների) միջոցով և պետական վերահսկողական ծառայության միջոցով.. 3. իր անդամի (անդամների) և (կամ) աուդիտորական մասնագիտացված կազմակերպության միջոցով. 4. աուդիտորական մասնագիտացված կազմակերպության միջոցով:		

Վարժություն 1. Հարցերի պատասխանների համապատասխանության հաստատում (որոնում)

Յուրաքանչյուր առանձին որոշեք, թե 1-ին սյունակում բերված 8 հարցերի ենթադրյալ պատասխաններից ո՞ր պատասխանն է ճիշտ և Ձեր պատասխանը գրանցեք 2-րդ սյունակում: Երբ վերջացնեք առաջադրանքի կատարումը, խմբի մյուս անդամներին ծանոթացրեք Ձեր գրառումների հետ: Բոլոր տարբերությունները համատեղ քննարկեք և խմբով եկեք համաձայնության բոլոր հարցերի համար: Գրանցեք խմբի ընտրությունը յուրաքանչյուր հարցի համար 3-րդ սյունակում:

Հարցերը և ենթադրյալ պատասխանները	Հարցի ճիշտ պատասխանը
Բյուջետային գործընթացի հիմնական փուլերն են՝ 1. բյուջեի կատարում և վերահսկում 2. բյուջեի կատարման տարեկան հաշվետվության կազմում և հաստատում 3. բյուջեի նախագծի հաստատում և վերահսկում 4. բյուջեի նախագծի կազմում և հաստատում, բյուջեի կատարում և վերահսկում, բյուջեի կատարման տարեկան հաշվետվության կազմում և հաստատում	4
Բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը համայնքի ղեկավարը ավագանուն ներկայացնում է՝ 1. ոչ ուշ, քան մինչև հաշվետու բյուջետային տարվան հաջորդող տարվա մարտի 1-ը. 2. ոչ ուշ, քան մինչև հաշվետու բյուջետային տարվան հաջորդող տարվա մարտի 20-ը. 3. ոչ ուշ, քան մինչև հաշվետու բյուջետային տարվան հաջորդող տարվա երկրորդ եռամսյակում 4. ոչ ուշ, քան մինչև հաշվետու բյուջետային տարվան հաջորդող տարվա հունվարի 15-ը.	1
Ի՞նչ ժամկետում է համայնքի ղեկավարը համայնքի բյուջեն ավագանու կողմից հաստատվելուց հետո ներկայացնում համապատասխան մարզպետին. 1. 5 օրվա ընթացքում. 2. 3 օրվա ընթացքում. 3. 7 օրվա ընթացքում. 4. 15 օրվա ընթացքում:	2
Համայնքի բյուջեի կատարման վերահսկողությունն իրականացնում են՝ 1. համայնքի ավագանին և ԱԺ-ն. 2. համայնքի ավագանին և պետական վերահսկողական ծառայությունը.	4

3. ԱԺ-ն և պետական վերահսկողական ծառայությունը. 4. համայնքի ավագանին, ԱԺ-ն և պետական վերահսկողական ծառայությունը:	
Համայնքի ՄԺԾԾ-ն բաղկացած է՝ 1. երեք մասից. 2. չորս մասից. 3. երկու մասից. 4. հինգ մասից:	2
Համայնքի ավագանին համայնքի բյուջեի կատարման վերահսկողությունն իրականացնում է՝ 1. իր անդամի (անդամների) միջոցով. 2. իր անդամի (անդամների) միջոցով և պետական վերահսկողական ծառայության միջոցով.. 3. իր անդամի (անդամների) և (կամ) աուդիտորական մասնագիտացված կազմակերպության միջոցով. 4. աուդիտորական մասնագիտացված կազմակերպության միջոցով:	3

Վարժություն 2. Ավագանու և համայնքի ղեկավարի լիազորությունները

Խմբով քննարկեք և փորձեք դասակարգել ավագանու և համայնքի ղեկավարի լիազորությունները:

N	Ավագանու և համայնքի ղեկավարի լիազորությունները	Ավագանու լիազորությունները	Համայնքի ղեկավարի լիազորությունները
1.	Համայնքի բյուջեի նախագիծը կազմելու նպատակով մշում է նախագծի կազմման օրացույց (բյուջետային օրացույց)		
2.	Համայնքի բյուջեի պակասուրդի կամ հավելուրդի չափը սահմանում է		
3.	Համայնքի բյուջեի մասին որոշումն ուժի մեջ մտնելուց հետո՝ երկշաբաթյա ժամկետում, սահմանում է համայնքի բյուջեի կատարման եռամսյակային համամասնությունները, բյուջետային օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում հաստատում է բյուջետային հիմնարկների պահպանման ծախսերի նախահաշիվները:		
4.	ՀՀԶԾ-ի, ՄԺԾԾ-ի, տարեկան բյուջեի, ՏԱՊ-ի նախագծերը հաստատում է		
5.	Համայնքի բյուջեի կատարման պատասխանատուն հանդիսանում է		
6.	Համայնքի բյուջեի նախագծի բյուջետային ուղերձը կազմում է		
7.	Համայնքի բյուջեի նախագծի վերաբերյալ կարող են ներկայացնել գրավոր առաջարկություններ		
8.	Եռամսյակը մեկ՝ մինչև հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա տասնհինգը, բյուջեի կատարման ընթացքի մասին հաղորդում է ներկայացնում		
9.	Վերահսկում է համայնքի բյուջեի կատարումը և համայնքի ստացած վարկերի ու այլ ներգրավված ֆինանսական միջոցների օգտագործումը		
10.	Համայնքի բյուջեն հաստատման որոշման նախագիծը ներկայացնում է		

Վարժություն 2. Ավագանու և համայնքի ղեկավարի լիազորությունները

Խմբով քննարկեք և փորձեք դասակարգել ավագանու և համայնքի ղեկավարի լիազորությունները:

N	Ավագանու և համայնքի ղեկավարի լիազորությունները	Ավագանու լիազորությունները	Համայնքի ղեկավարի լիազորությունները
1.	Համայնքի բյուջեի նախագիծը կազմելու նպատակով մշտում է նաակխագծի կազմման օրացույց (բյուջետային օրացույց)		
2.	Համայնքի բյուջեի պակասուրդի կամ հավելուրդի չափը սահմանում է		
3.	Համայնքի բյուջեի մասին որոշումն ուժի մեջ մտնելուց հետո՝ երկշաբաթյա ժամկետում, սահմանում է համայնքի բյուջեի կատարման եռամսյակային համամասնությունները, բյուջետային օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում հաստատում է բյուջետային հիմնարկների պահպանման ծախսերի նախահաշիվները:		
4.	ՀՀԶԾ-ի, ՄԺԾԾ-ի, տարեկան բյուջեի, ՏԱՊ-ի նախագծերը հաստատում է		
5.	Համայնքի բյուջեի կատարման պատասխանատուն հանդիսանում է		
6.	Համայնքի բյուջեի նախագծի բյուջետային ուղերձը կազմում է		
7.	Համայնքի բյուջեի նախագծի վերաբերյալ կարող են ներկայացնել գրավոր առաջարկություններ		
8.	Եռամսյակը մեկ՝ մինչև հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա տասնհինգը, բյուջեի կատարման ընթացքի մասին հաղորդում է ներկայացնում		
9.	Վերահսկում է համայնքի բյուջեի կատարումը և համայնքի ստացած վարկերի ու այլ ներգրավված ֆինանսական միջոցների օգտագործումը		
10.	Համայնքի բյուջեն հաստատման որոշման նախագիծը ներկայացնում է		

Հարց 1. Բյուջետային գործընթացի նկատմամբ պետական լիազորված մարմինն իրականացնում է՝

- 1) մասնագիտական հսկողություն.
- 2) իրավական հսկողություն.
- 3) իրավական և մասնագիտական հսկողություն:

Հարց 2. Համայնքի բյուջեն բաղկացած է՝

- 1) վարչական մասից.
- 2) ֆոնդային մասից.
- 3) վարչական և ֆոնդային մասերից:

Հարց 3. Համայնքի բյուջեի նախագիծն իր մեջ ընդգրկում է՝

- 1) համայնքի ղեկավարի բյուջետային ուղերձը և համայնքի բյուջեի մասին ավագանու որոշման նախագիծը.
- 2) համայնքի բյուջեի մասին ավագանու որոշման նախագիծը.
- 3) համայնքի ավագանու բյուջետային ուղերձը:

Հարց 4. Պետության կողմից համայնքներին տվյալ տարում տրվող փոխհատուցման գումարները սահմանվում է ոչ պակաս, քան տվյալ տարվան նախորդող երկրորդ բյուջետային տարում ՀՀ համախմբված բյուջեի փաստացի եկամուտների հանրագումարի.

- 1) 2 տոկոսը.
- 2) 5 տոկոսը.
- 3) 4 տոկոսը:

Հարց 5. Համայնքի բյուջեի կազմման, քննարկման և հաստատման կարգը սահմանվում է.

- 1) ավագանու որոշմամբ.
- 2) համայնքի ղեկավարի որոշմամբ.
- 3) ՀՀ բյուջետային օրենսդրությամբ:

Հարց 6. Բյուջեի նախագիծը համայնքի ղեկավարը ավագանու քննարկմանն է ներկայացնում ՀՀ կառավարության կողմից ֆինանսական համահարթեցման սկզբունքով համայնքներին տրամադրվող դոտացիաների նախնական թվերի հրապարակումից հետո՝

- 1) երկամսյա ժամկետում.
- 2) մեկամսյա ժամկետում.
- 3) եռամսյա ժամկետում:

Հարց 7. Մինչև բյուջետային տարվա սկիզբը համայնքի բյուջեն չհաստատվելու դեպքում ծախսերը կատարվում են՝

- 1) ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված կարգով.
- 2) նախորդ տարվա բյուջեի համամասնություններով.
- 3) համայնքի ղեկավարի կողմից ներկայացրած համայնքի բյուջեի նախագծով նախատեսված համամասնություններով:

Հարց 8. Բյուջեի կատարման վերահսկման գործընթացը ներառում է՝

- 1) կառավարման գործառույթների պարբերական վերլուծությունը և վերահսկողությունը.
- 2) ֆինանսական և հաշվապահական վերահսկողությունը, ծրագրերի կամ կատարված աշխատանքների վերլուծությունը և գնահատումը.
- 3) ֆինանսական և հաշվապահական վերահսկողությունը, կառավարման գործառույթների պարբերական վերլուծությունը և վերահսկողությունը, ծրագրերի կամ կատարված աշխատանքների վերլուծությունը և գնահատումը:

Հարց 9. Համայնքի ղեկավարը եռամսյակը մեկ՝ մինչև հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա 15-ը, բյուջեի կատարման ընթացքի մասին հաղորդումներ է ներկայացնում.

- 1) համայնքի ավագանուն,
- 2) համապատասխան մարզպետին,
- 3) երկուսին միաժամանակ:

Հարց 10. Համայնքի բյուջեի պահուստային ֆոնդերը կարող են օգտագործվել.

- 1) համայնքի ղեկավարի որոշմամբ,
- 2) միայն համայնքի ավագանու որոշմամբ,
- 3) մարզպետի հանձնարարությամբ:

1. Ձեռնարկ համայնքի ավագանու անդամների և անդամության թեկնածուների համար, Հայաստանի ավագանիների ասոցիացիա, 2016 թ.
2. «Տեղական ինքնակառավարման հիմունքները», ուսումնական ձեռնարկ, Է. Օրդյանի ընդհանուր խմբագրությամբ, «Պետական ծառայություն», Երևան, 2002 թ.
3. Ղազարյան Է., 100 հարց և պատասխան տեղական ինքնակառավարման մասին, հեղինակային հրատարակչություն, Երևան, 2003 թ.
4. Շահբազյան Վ., Սահակյան Գ. «Համայնքի ֆինանսական կառավարում», ուսումնամեթոդական ձեռնարկ, Երևան, 2009 թ.

1. ՀՀ Սահմանադրություն
2. «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք
3. «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք
4. «Ֆինանսական համահարթեցման» ՀՀ օրենք

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ

Համայնքի ավագանուն՝ ՀՀ Սահմանադրությամբ և «Տեղական
ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով վերապահված
լիազորությունները

Հեղինակ՝

Ժիրայր Ղազարյան

Համակարգչային
ծնավորող՝

Հասմիկ Նավասարդյան

